«ԱՐԵՎԵԼՅԱՆ» ԵՎ «ԱՐԵՎՄՏՅԱՆ» ՄՈՒՇԿԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Ա. Վ. ՔՈՍՅԱՆ

Մասնագիտական գրականության մեջ տասնամյակներ շարունակ արծարծվել է մ. թ. ա. XII—VII դդ. ընթացքում ասորեստանյան, ուրարտական և հիերոգլիֆային լուվիական աղբյուրներում վկայված մուշկերի և դրանց հետ ինչ-որ կապակով առնչվող Մուշկու երկրի տեղայնացման ու էթնիկական բովանդակության խնդիրը։ Քանի որ նշված տերմինով կոչվել են ինչպես Փոքր Ասիայի արևմուտքում՝ Սանգարիոսի հովտում գտնվող Մեծ Փռյուգիան, այնպես էլ Վերին Եփրատի և Վերին Տիգրիսի ավազաններում հանդես եկող էթնիկական մի խումբ, ապա ուսումնասիրողները հիմնականում փորձել են երկուսին մեկ ընդհանուր եզակետ և ծագում վերագրել։ Ոմանք վերին-եփրատյան մուշկերին դիտել են որպես Հյուսիսային Բալկաններից խեթական տերության արոհման շրջանում դեպի արևելք ընթացած ցեղերի մի խումբ[1]։ Մյուսները վերինեփրատյան մուշկերին առաջարկել են նույնացնել Փոքր Ասիայի հյուսիս-արևելքում անտիկ աղբյուրների կողմից հիշատակվող մոսխերի (Μόσχοι) հետ[2]։ Ըստ վերջին տեսակետի, արևելյան մուշկերը կամ մ. թ. ա. XII դարից հետո են միայն շարժվել դեպի Սանգարիոսի հովիտ, կամ էլ մուշկերի և Մուշկու երկրի (Փռյուգիա) անունների նմանությունը պատահական է։

Մինչև վերջին տարիները արևելյան և արևմտյան մուշկերի միջև ենթադրվող կապը ավելի շուտ վերացական ենթադրության արդյունք էր, քանի որ հնագիտական ուսումնասիրություններն անկարդակր թույլ չէր տալիս ընդունելու կամ ժխտելու վերոհիշյալ տեսակետներից որևէ մեկը։

Որո՞նք են արևելյան և արևմտյան մուշկերի խնդրում եղած բարդությունները։

1) Մ. թ. ա. XIII դարի երկրորդ կեսին—XII դարի սկզբին Առաջավոր Ասիայում և Էգեիդայում սկիզբ առած քաղաքական խոր ճգնաժամի ընթացքում խեթական տերության արոհումը ներկայացվում էր որպես բալկանյան ցեղերի և «ծովի ժողովուրդների» անկասելի հարձակման հետևանք[3], որի ըն-

---

[1] И. М. Дьяконов. ПАН, с. 118 сл; Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 52—53, W. F. Albright. Syria, the Philistines, and Phoenicia — In: CAH II/2, 1975, p. 50.; J. P. Mallory. In Search of the Indo-Europeans. London, 1989, p. 31 ff.

[2] Г. А. Меликишвили. Наири-Урарту. Тбилиси, 1954, с. 106; A. Götze. Kleinasien, Heidelberg, 1957, S. 185; Дж. Маккуин. Хетты и их современники в Малой Азии. М., 1983, с. 51 և այլն։ Վերինեփրատյան մուշկերի և փռյուգացիների նույնության մասին կարծիքը չի կիսում նաև Ջ. Մելլաարը (Troy VIIa in Anatolian Perspective.—In: The Trojan War, p. 67): *Ըստ Ռ. Դ. Բարնեթի, մուշկերը կարող էին կապ ունենալ անտիկ աղբյուրների մոսխերի և պիրարենների հետ, որոնք փռյուգացիների առաջխաղացման շրջանում Փոքր Ասիայի հյուսիս-արևելքից շարժվել էին դեպի Հալիսի գլորանի շրջանը* (Phrygia and the Peoples of Anatolia in the Iron Age.—In: CAH II/2, 1975, p. 420):

[3] R. D. Barnett. The Sea Peoples.—In: CAH II, ch. XXVIII, 1960, p. 13f.; O. R. Gurney. The Hittites. Baltimore, 1981, p. 41; И. М. Дьяконов. ПАН, с. 118 сл; Ն. Ադոնց. *Նշվ. աշխ., էջ 52—53*; Fr. Cornelius. Geschichte der

թացքում տեսականորեն կարելի էր պատկերացնել բալկանցիների մի հատվածի ներթափանցման հնարավորությունը դեպի արևելյան Փոքր Ասիա և Վերին Եփրատի ավազան։ Սրանից կարծես տրամաբանորեն բխում էր «արևելյան» մուշկերի արևմտյան ծագման վարկածը։

2) Մինչև XX դարի 80-ական թթ. վերջը Սանգարիոսի հովտում գտնվող Մեծ Փռյուգիայի մայրաքաղաք Գորդիոնի պեղումները ավելի շուտ վկայում էին բալկանյան էթնոսի դանդաղ, աստիճանական ներթափանցման օգտին տեղական միջավայր[4], մի փաստ, որը, անկասկած, անհամատեղելի էր խեթական տերության ավերման մասին գերիշխող տեսակետի հետ։ Գորդիոնում նոր էթնիկական տարրի ներթափանցման նման եղանակը հազիվ թե հնարավոր լիներ համատեղել նրանց մի զգալի մասի՝ Եփրատ հասնելու մասին կարծիքի հետ։

3) Գորդիոնում եկվոր բալկանյան տարրի խաղաղ ներթափանցման մասին պատկերացումը դժվար էր համատեղել Sroja VIIb 1 և b 2 շերտերի, ինչպես նաև խեթերի մայրաքաղաք Խաթթուսասի դաժան ավերածությունների փաստի հետ։

Այս և որոշ այլ նկատառումներ դժվարացնում էին մուշկերի խնդրի լուծումը։ Սակայն վերջին տասնամյակում հնագիտական և գրավոր նոր նյութերի ի հայտ գալով հնարավորություն է ստեղծվում զգալիորեն մոտեցնելու այն։ Արևմտյան և կենտրոնական Փոքր Ասիայում 1980-ական թթ. կատարված պեղումները թույլ են տալիս մոտավոր պատկերացում կազմելու մ. թ. ա. XII դարի սկզբներին ընթացած բալկանյան միգրացիայի բնույթի և աշխարհագրական ընդգրկման մասին։

1. ՏՐՈԱԴԱ ԵՎ ԲԱԼԿԱՆՅԱՆ ԹՐԱԿԻԱ

Բալկանյան ժողովուրդների հնարավոր միգրացիան դեպի Փոքր Ասիա անհնար է պատկերացնել այլ ճանապարհով, քան Եվրոպան և Ասիան կապող նեղուցներով։ Եթե այն իրոք խոշոր մասշտաբներ ունենար, ապա, անկասկած, նկատելի հետքեր պիտի թողներ Տրոադայում և հատկապես հնագիտորեն լավ ուսումնասիրված Տրոյայի՝ ուշբրոնզեդարը եզրափակող շերտերում։

Հայտնի է, որ Sroja VIIb 1 հնագիտական շերտը կործանվել է ուժեղ ավերածությունների և հրդեհի հետևանքով, մի իրադարձություն, որը ժամանակագրորեն համընկնում է խեթական մայրաքաղաքի և կենտրոնական ու հարավային Փոքր Ասիայի մյուս քաղաքների ավերման հետ, այսինքն, մոտավորապես մ. թ. ա. 1200 թ.[5]։ Ավերման շերտին հաջորդող շերտում հայտ-

---

Hethiter. Darmstadt, 1973, S. 277ff.; G. A. Lehmann. Der Untergang des hethitischen Grossreiches und die neuen Texte aus Ugarit, „Ugarit-Forschungen", Bd. 2, 1970, S. 42ff.

[4] R. S. Young. The Gordion Campaign of 1965.—AJA 70, 1966, p. 276f.; Т. А. Моисеева. К вопросу о характере фригийского государства в VIII—начале VII вз. до н. э.— ВДИ. 1986, № 3. с. 17; G. K. Sams. Western Anatolia.—In: Crisis, p. 59.

[5] Այս գերիշխող կարծիքը, սակայն, չին կիսում մի շարք հնագետներ։ Այսպես, Կ. Բլեգենը այս իրադարձությունը թվագրում է մոտավորապես մ. թ. ա. 1100 թ. (Troy IV, Princeton, 1958, p. 146)։ Տրոյա VIIa, VIIb 1—2 շերտերի և Տրոյական պատերազմի հարաբերակցության հարցի շուրջ եղած կարծիքների մասին տե՛ս M. J. Mellink. Postscriptum.—In: Troy and the Trojan War: A Symposium Held at Bryn Mawr College. October 1984. Bryn Mawr College, 1986, p. 93—101; S. Hiller. Two Trojan Wars?—In: Studia Troica 1, 1991, p. 145ff..

նրված Buckelkeramik-ը, որոնք մասնագետների կարծիքով, լավ զուգահեռներ ունի Հյուսիսային Բալկաններում՝ Թրակիայում։ Կարծիք կա նույնիսկ այս խեցեղենի ավելի հեռավոր աղբյուրի՝ կենտրոնական Եվրոպայի ուշբրոնզադարյան Lausitz կոչվող մշակույթի մասին[7]։

Տրոյա VIIb 2-ի Buckelkeramik-ի ստեղծողների նույնացումը բալկանյան վերաբնակիչների հետ հանդիպում է երկու բարդության։

1) Այդ խեցեղենին պատրաստման եղանակով (առանց բրուտի անիվի, թրծված) և ձևերով շատ մոտ խեցեղենի առկայությունը հարավային Հունաստանի միկենյան մի շարք բնակավայրերում՝ Միկենք, Տիրինթոս, Լեֆկանդի (Էվրեա), Կորակու (Կորնթոս) և այլն դեռևս Ուշհելլադյան IIIB 2 փուլում (մ. թ. ա. 13-րդ դար), այսինքն, նախքան միկենյան քաղաքների անկումը մ. թ. ա. 1200 թ. սահմաններում[8]։ Այդպիսի խեցեղեն վկայված է նաև Կիպրոսում և Լևանտում[9]։

Ինչպե՞ս կարելի է մեկնաբանել այս իրադրությունը։

Եթե վերոհիշյալ շրջաններում հայտնված օտարածին խեցեղենը գիտվի որպես դրանք ստեղծողների առկայության վկայություն, ապա նշանակում է, որ Հյուսիսային Բալկաններից դեպի Էգեյան ծովի հարավային ավազան և Միջերկրականի արևելք ժողովուրդների տեղաշարժը պիտի սկսվեր դեռ նախքան մ թ. ա. XII դարի ճգնաժամը։ Այդ դեպքում նշված շարժումները հնարավոր է մեկնաբանել որպես աստիճանական, փոքրածավալ ինֆիլտրացիա տեղական բնակչության դերակշիռ զանգվածի մեջ։ Տեսականորեն, նոր տիպի խեցեղենի կրողների նույնացումը «ծովի ժողովուրդների» առաջին ալիքի հետ (մ. թ. ա. XIII դարի վերջին տասնամյակ) անհնար չէ, բայց վերին աստիճանի քիչ հավանական, քանի որ այժմ կարելի է հիմնականում ապացուցված համարել «ծովի ժողովուրդների» փոքրասիական և մասամբ նաև հունալեզու պատկանելությունը[10]։

Հյուսիսբալկանյան խեցեղենի ներմուծման հնարավորությունը նույնպես չի կարելի բացառել, չնայած բավական դժվար է ըմբռնել դրա անհրաժեշտությունը խեցեգործական հիանալի ավանդույթներ ունեցող միկենյան և լևանտյան քաղաքներում[11]։

---

[6] C. Blegen. Troy IV, p. 142. Idem. Troy VII.—In: CAH 11/2, 1975, p. 16.; M. I. Finley. The Trojan War.—JHS 84, 1964, p. 5 and n. 9; J. Rutter. Ceramic Evidence for Northern Intruders in Southern Greece at the Beginning of the Late Helladic IIIC Period.—AJA 79, 1975/1, p. 3 ff.; J. D. Muhly. The Crisis Years in the Mediterranean World: Transition or Cultural Disintegration?—In: Crisis, p. 12, և այլն։

[7] C. Blegen. Troy VII.—In: CAH 11/2, 1975, p. 164.

[8] J. Rutter. Op. cit., p. 17ff.; H. W. Catling and E. A. Catling. „Barbarian" Pottery from the Mycenaean Settlement at the Menelaion, Sparta.—BSA 76, 1981, p. 71ff.

[9] J. D. Muhly.—In: Crisis, p. 13.

[10] Այս հարցի շուրջ եղած կարծիքների քննությունը տե՛ս N. K. Sandars. The Sea Peoples. London, 1978; J. Mellaart. The Archaeology of Ancient Turkey. London, 1978; Ա. Վ. Քոջյան. Էգեիական տեղաշարժերը Փոքր Ասիայում ի Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. XII դարում. ՊԲՀ, 1991, № 1, էջ 70—71 և հտ.։

[11] Միկենյան բաղարակրթության կենտրոնների անկման նախօրեին (մ. թ. ա. XIII դարի երկրորդ կես—Ուշհելլադյան IIIB-ի վերջին փուլ) առանց բրուտի անիվի պատրաստված պարզունակ խեցեղենի հայտնվելը վերջերս փորձ է արվել մեկնաբանել հետևյալ կերպ։ Անկման շրջանում պալատական համակարգի քայքայման պրոցեսում պալատական և տաճարային տնտեսության խեցեգործական խոշոր արհեստանոցների գործունեության մասշտաբների կրճատումը կամ վերացումը պիտի դրդեին բնակչությանը անցնելու պարզ տնայնագործության (P. B. Small. Handmade Burnished Ware and Prehistoric Aegean Economics: an Argument for Indigenous Appearance.—JMA 3, 1990/1, p. 3—25)։

2) Եթե Հյուսիսային Բալկաններից, մասնավորապես Թրակիայից, նշված ժամանակաշրջանում քիչ թե շատ խոշոր միգրացիա լիներ, ապա այստեղի ուշբրոնզեդարյան բնակավայրերի մի մասը անխուսափելիորեն պիտի մշակութային ընդհատում կամ գոնե կենսագործունեության նվազում ցույց տար։ Այսինքն, Հյուսիսային Բալկանները պիտի զրկվեին բնակչության մի զգալի մասից։ Սակայն Բալկանյան Թրակիայի հնագիտական ուսումնասիրությունները վկայում են որևէ ընդհատման կամ անկման բացակայության օգտին[12]։ Ավելի շուտ կարելի է ենթադրել տասնամյակների ընթացքում Թրակիայից բալկանյան տարրի խաղաղ ներթափանցում, քան միաժամանակյա ավերիչ տեղաշարժ[13]։ Ողջ Տրոադայում, բացի բուն Տրոյայից, մ. թ. ա. 1200 թ. մոտերքում այլ ավերածություններ չկան[14]։

2. ԳՈՐԴԻՈՆ-ՅԱՍՍԸՀՅՈՅՈՒՔ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐ ԱՍԻԱ

Այժմ տեսնենք, թե ինչպիսին է իրավիճակը Տրոադայից հարավ-արևելք, Սանգարիոսի հովտում (որտեղ շատ ավելի ուշ ձևավորվեց Մեծ Փռյուգիան), ինչպես նաև կենտրոնական Փոքր Ասիայում։ Սրանք այն շրջաններն են, որտեղով, ըստ ավանդական տեսակետի. պիտի անցած լիներին Խեթական տերությունը կործանած եվրոպական ցեղերը։ Եղե՞լ է արդյոք այստեղ բալկանյան ժողովուրդների՝ վռյուգացիների և թրակյան ժողովուրդների ներհոսք, և ինչպես կարելի է բնութագրել նրանց ընթացքը և թվագրել այն։

Գորդիոնի հնագիտական ուսումնասիրությունը միանշանակ վկայում է, որ ուշբրոնզեդարի եզրափակիչ փուլում, որը ժամանակագրորեն համընկնում է Խեթական տերության անկման հետ, և նույնիսկ դրան հաջորդող զգալի ժամանակահատվածի ընթացքում այստեղ խոշոր ավերածություններ վկայված չեն[15]։ Սակայն, միևնույն ժամանակ, խեթական խեցեղենով բնութագրվող ուշբրոնզեդարի վերջին շերտի վրա նստած է մի շերտ, որին հատուկ է առանց բրուտի անիվի պատրաստված կոպիտ և պարզունակ խեցեղենը[16]։ Վերջինս սովորաբար կապում են համաժամանակյա Srnjya VIIb 1 և VIIb 2 շերտերում հայտնվող Coarse Ware-ի և Buckelkeramik-ի հետ, որոնց կրողներ են համարվում հյուսիսբալկանյան վերաբնակիչները[17]։ Այսպիսով, Գորդիոնի առաջին ետխեթական շերտը ավանդաբար դիտվում է Srnjya VIIb 1 և VIIb 2-ի հետ սերտ կապի մեջ։

Սակայն Տրոյայի հիշյալ խեցեղենի և Գորդիոնի նոր խեցեղենի միջև եղած որոշ նմանությունները դեռևս համոզիչ փաստարկ չեն միանշանակ եզրակացնելու Տրոադայով դեպի Սանգարիոսի հովիտ ընթացած խոշոր էթնիկական տեղաշարժի օգտին։ Բանն այն է, որ խեցեղենային համալիրների միջև կան

---

[12] P. S. Wells. Crisis Years? The 12th Century B. C. in Central and Southeastern Europe.—In: Crisis, p. 31ff.

[13] J. Macqueen. The Hittites and Their Contemporaries in Asia Minor. New York, 1986, p. 158; G. K. Sams.—In: Crisis, p. 57.

[14] M. Özdogan. Taslicabayır. A Late Bronze Age Burial Mound in Eastern Thrace.—Anatolica 14, 1987, p. 5ff.

[15] R. S. Young.—AJA 70, 1966, p. 276f.; G. K. Sams.—In: Crisis, p. 59.

[16] G. K. Sams. Op. cit., p. 59.

[17] C. Blegen. Troy IV, p. 159; E. French. The First Phase of LH IIIC.—AA 1969, p. 133f; J. Rutter.—AJA 79, 1975/1, p. 17ff.; K. DeVries. The Cordion Excavation Seasons of 1969—1973 and Subsequent Research.—AJA 94, 1990/3, p. 371f.; J. D. Muhly.—In: Crisis, p. 12 և այլն։

արմատական տարբերություններ և դրանց միջև կապը անուղղակի է[15]։ Հնարավոր են այս իրավիճակի գնահատման երկու այլընտրական տարբերակներ. 1) Տրոյայի և Գորդիոնի նոր բնակիչները տեղաշարժային տարբեր ալիքների կրողներ են, և այդ դեպքում Տրոյա VIIի 1-ը և խեթական Գորդիոնը հազիվ թե գրավված լինեին գրեթե միաժամանակ, 2) Նշված երկու քաղաքների նոր բնակիչները մշակութային առումով միատարր չեն եղել։

Գորդիոնում նոր էթնիկական տարրի ներթափանցումը հնագետների մեծ մասի կողմից դիտվում է որպես դարեր տևած աստիճանական ինֆիլտրացիա, որը միայն ժամանակի ընթացքում պիտի փոխեր այստեղի դուռ փոքրասիական-խեթական մշակույթին բնորոշ գծերը[12]։

Ստնդարիոսի հովտում ուշ բրոնզից վաղ երկաթ անցման փուլի իրական դատակների և բալկանյան միգրացիայի գնահատման հարցում հատկապես կարևոր տվյալներ են ի հայտ եկել 1988—1989 թթ. պեղումների ընթացքում[20]։

Խեցեղենի, ճարտարապետության և այլ տվյալների հիման վրա հստակորեն զծագրվում են Գորդիոնի ետիեթական շրջանի երկու փուլեր, որոնցից յուրաքանչյուրը, ըստ պեղող հնագետների հիմնավոր կարծիքի, էթնոմշակութային երկու տարբեր դանդվածների առկայության արդյունք է։ Նշված փուլերն ընդգրկում են մոտավորապես մ. թ. ա. 1200—950/900 թթ., այսինքքն, խեթական ժամանակաշրջանի ավարտից մինչև նոր բնակչության հանդես գալը համեմատաբար մեծ ժամանակագրական ճեղքվածք չկա, եթե այդպիսին ընդհանրապես առկա է[21]։ Այդ փուլերն են՝ 1) Յուսսրճյոյուք 7B (ունի երկու ենթաշերտ—մինչև մ. թ. ա. 1000 թ. մոտերքը), 2 Յուսսրճյոյուք 7A (մ. թ. ա. 1000—950/900 թթ. մոտերքը)[22]։

Գորդիոնի 7B-ին բնորոշ միակ խեցեգործական համալիրը բաղկացած է սև գույնի պարդ, առանց բրուտի անիվի պատրաստված և ցածր ջերմաստիճանի տակ թրծված (600—700°) անոթներից։ Որ Գորդիոնի նոր բնակչությունը օգտվել է ոչ թե արհեստանոցային ստանդարտ իրերից, այլ սեփական, տնայնագործական արտադրանքից, լավ երևում է հետևյալ դիտարկումից. նույնատիպ անոթները տարբերվում են գրեթե բոլոր ատրիբուտներով։

Կարևոր է նշել, որ այս խեցեղենը չունի տեղական նախատիպ։ Ուշբրոնզեդարյան խեցեգործական ավանդույթը 7B-ում չի շարունակվել, որը թույլ է տալիս վստահորեն խոսել խեթական շրջանի մշակույթի լիակատար ընդհատման, այլ ոչ աստիճանական անցման մասին[23]։

---

18 G. K. Sams.—In: Crisis, p. 59; Տրոյա VIIb շերտի խեցեղենը ուղղակի զուգահեռներ ունի Տրոադայում և Մարմարա ծովի ու Բոսֆորի հյուսիսային առափնյա շրջանում M. Özdogan.—Anatolica 14, 1987, p. 5ff). Սրանից կարելի է ենթադրել, որ Տրոյա VIIb 1-ի ավերողները և այն վերարնակեցնողները, հավանաբար, սահմանափակվել են միայն Տրոադայով, համենայնդեպս, մ. թ. ա. 1200 թ. մոտերքում և դրանից դեռ բավական ժամանակ անց։

19 Նոր, փրյուգական մշակույթի բնորոշ առանձնահատկությունները Գորդիոնում ձևավորվել են առնվազն երեք-չորս հարյուր տարվա ընթացքում, ավարտվելով միայն մ. թ. ա. IX—VIII դդ.։ Օրինակ, Գորդիոնում փրյուգական դամբարանային թաղման (tumulus) պրակտիկան, որը վկայված է Մակեդոնիայում շատ ավելի վաղ, այստեղ հայտնվում է միայն մ. թ. ա. VIII դարի կեսերից ոչ շուտ (G. K. Sams. The Early Phrygian Period at Gordion: Toward a Cultural Identity.—Source VII, 1988, 3/4, p. 12)։

20 Գորդիոնի պեղումների նոր փուլի արդյունքներն ամփոփված են հետևյալ աշխատություններում՝ R. C. Henrickson. Continuity and Discontinuity in the Ceramic Tradition of Gordion during the Iron Age.—In: AIA 3, pp. 95—129; M. Voigt. Excavations at Gordion 1988—1989: the Yassihöyük Stratigraphic Sequence.—In: AIA 3, pp 265—293.

21 M. Voigt. Op cit., p. 276.

22 Նույն տեղում, էջ 268։

23 R. Henrickson. Op. cit., p. 107.

Գորդիոնի հաջորդ՝ 7A փուլը իր մշակութային համալիրով ակնհայտորեն նախորդի շարունակությունը չէ. այն իր նախատիպը չունի ո՛չ ուշ բրոնզեդարում (Spätbronzezeit 8), ո՛չ էլ 7B-ում[24]։ Միևնույն ժամանակ, 7A-ում հայտնվող դորշ խեցեղենի բոլոր տիպերը լավ վկայված են հետագա ժամանակների փռյուգական մշակույթում, որն, անկասկած, վկայում է 7A-ի և Գորդիոնի հաջորդ փուլի միջև շարունակականության օգտին[25]։

Այսպիսով, Գորդիոնի նորահայտ նյութը վկայում է մ. թ. ա. XII—X դդ. ընթացքում նոր բնակչության երկու ալիքների ներհոսքի մասին։ Դրանցից առաջինը ինչ-որ պահ խեթական տերության անկման շրջանում (մ. թ. ա. XII դարի սկիզբ), իսկ երկրորդը՝ մեկ-երկու դար հետո։ Ելնելով Գորդիոնի ետխեթական առաջին երկու փուլերի միջև մշակութային կապերի բացակայության ակնառու փաստից, նշված տեղաշարժային ալիքների կրողները հազիվ թե միևնույն էթնոմշակութային համալիրի ներկայացուցիչներ լինեին։ Ավելին, առավել քան հավանական է, որ նրանց ելակետները տարբեր են եղել։ Իհարկե, սա միակ հնարավոր տարբերակը չէ։ Տեղաշարժային առաջին ալիքի կրողները կարող էին լինել մի որոշակի էթնիկական զանգվածի ծայրագավառային «բարբարոսական» հատվածը, որը ավելի վաղ էր սկսել շարժումը դեպի Սանգարիոսի հովիտ։

Ինչպե՞ս կարելի է բնութագրել վերոհիշյալ միգրացիոն ալիքները, դրանց շարժման հետևանքները ուսումնասիրվող տարածաշրջանի վրա։

Եթե 7B փուլի բնակիչները իրոք կապ ունեն հյուսիսբալկանյան ժողովուրդների հետ, մի տեսակետ, որ կիսում է հնագետների մեծ մասը[26], ապա, թերևս, հնարավոր լինի այդ շարժումը դիտել Տրոյա VIIb 1-ի ավերման ֆոնի վրա, չնայած չի կարելի բացառել նաև մեկ այլ հնարավորություն, այն է՝ արևմտյան և հյուսիս-արևմտյան Փոքր Ասիայի ծայրագավառային բնակչության ներհոսք դեպի խեթական տերության տրոհումից թուլացած Գորդիոն։

Ինչևէ, Գորդիոնի պեղումներից ստացված նյութը ստիպում է ավելի հավանական համարել Բալկաններից Տրոադայով դեպի Սանգարիոսի հովիտ ընթացած ժողովուրդների տեղաշարժի մասին ավանդական տեսակետը[27]։ Սակայն մեր ուսումնասիրության նպատակների տեսանկյունից հատկապես կարևոր է պարզել ոչ այնքան վերոհիշյալ տեղաշարժերի լինել-չլինելու հարցը, որքան դրանց մասշտաբները, աշխարհագրական ընդգրկումը։

Սանգարիոսի հովտից արևելք, նախկին խեթական տերության կենտրոնական շրջաններում, ուշ բրոնզ—վաղ երկաթ անցման շրջանում (մ. թ. ա. XII դար) Գորդիոնի վերոհիշյալ 7B փուլի խեցեղենին նման խեցեղեն է հայտնաբերվել Հալիսի հոսանքի ներսում՝ Կաման-Կալեհյոյուքում[28]։ Իսկ ինչ վերաբերում է Բողազքյոյ-Խաթթուսասի և կենտրոնական Փոքր Ասիայի շուրջ մեկ տասնյակ ավերված բնակավայրերին, ապա այստեղ ետխեթական շերտերում այդպիսի խեցեղեն չկա։ Նման խեցեղենը բացակայում է ինչպես Հալիսից հարավ, այնպես էլ թերակղզու արևելյան շրջաններում[29]։ Կարևոր է նշել,

---

24 Նույն տեղում, էջ 109 f:

25 M. Voigt. Op. cit., p. 277. Այս առումով հատկանշական է, որ մինչև մ. թ. ա. X դարը Գորդիոնը չունի որևէ նյութ, որը կվկայի այստեղ փռյուգացիների ներկայության օգտին (J. Mellaart.—In: The Troian War, p. 67f):

26 Տե՛ս ծան. 17։

27 Այս հարցի շուրջ վերջին շրջանում տե՛ս N. K. Sandars. The Sea Peoples; W. F. Albright.—In: CAH 11/2, p. 512f.; R. D. Barnett. The Sea Peoples.—In: CAH 11/2, p. 371ff.; J. Mellaart. Նշվ. աշխ., p. 75f.

28 M. J. Mellink. Archaeology in Asia Minor.—AJA 96, 1992/1, p. 130.

29 J. Yakar. Anatolian Civilization Following the Disintegration of the Hittite Empire: an Archaeological Appraisal.—Tel Aviv 20, 1993, p. 10ff.; Կիլիկյան դարպասների շրջանում գտնվող Փորսուկ բնակավայրի խեթական շերտին անմիջապես, առանց ընդ-

որ արևելյան Փոքր Ասիայում՝ Մալաթիայում և Կարահյույուք-Էլբիստանում ուշ բրոնզ—վաղ երկաթ անցումը տեղի է ունեցել խաղաղ, առանց մշակութային ընդհատման[29]։

Նախքան Վերին Եփրատի ավազանում մուշկերին և նրանց հետ հիշատակվող ցեղերին անցնելը, փորձենք եղած հնագիտական և գրավոր աղբյուրների հիման վրա համառոտակի բնորոշել Տրոյա VIIb 2-ի, Յասսըհյույուք 7Ե–ի և Կաման-Կալեհյույուքի նոր խեցեղենի կրողների տարածման սահմանները և նրանց դերը մ. թ. ա. XII դարի սկզբին տեղի ունեցած իրադարձություններում։ Այդ տեղաշարժի ընդգրկման չափերի և աղդեցության բնորոշումը կախված է հետևյալ նկատառումներից.

1) Յասսըհյույուք 7B–ին բնորոշ խեցեղենը և նրա ենթադրվող տրոյական և կամանյան զուգահեռները տարածվում են Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքից մինչև Հալիսի հոսանքի հարավ-արևմտյան շրջանը։

2) Բողազքյոյ-Խաթթուսասի եռեխթական շերտերի (Բյույուքկալա և Բյույուքկայա) և նախորդ կետում նշված շրջանների նոր մշակույթի միջև որևէ կապ չի նշմարվում[31]։

3) Խաթթուսասի ավերման ժամանակաշրջանում կենտրոնական Փոքր Ասիայի խեթական մյուս ավերված քաղաքները գտնվում են խեթերի մայրաքաղաքից հյուսիս-արևելք, այսինքն, ոչ թե ենթադրվող բալկանյան վերաբնակիչների ուղու վրա, այլ հակառակ կողմում[32]։

4) Փոքր Ասիայի արևելքում ավերածությունների բացակայությունը և մշակութային շարունակականությունը։

5) Այսպես կոչված «մուշկական» խեցեղենի լայն տարածումը Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում, ինչի մասին ավելի ուշ։

Այսպիսով, հենվելով վերոհիշյալ փաստերի վրա, հնարավոր ենք համարում առաջարկելու մ. թ. ա. XII դարում տեղի ունեցած բալկանյան ցեղերի էթնիկական տեղաշարժերի հետևյալ ընթացքը։

Բալկանյան ժողովուրդների շարժումը դեպի Փոքր Ասիա, ամենայն հավանականությամբ, պիտի ընդգրկեր Տրոադան, Սանգարիոսի հովիտը և որոշ այլ շրջաններ ավելի արևելք, բայց ոչ խեթերի մայրաքաղաք Խաթթուսասը և կենտրոնական Փոքր Ասիայի դդայի մասը։ Թվում է, որ այստեղ ավերածությունների հեղինակները կարող էին ուրիշ ժողովուրդներ լինել[33], եթե ոչ

միջման հաջորդում է վաղ երկաթեդարի շերտը, որի խեցեղենը, դատելով Դաշտային Կիլիկիայի վաղերկաթեդարյան խեցեղենի հետ նմանությունից, ծագում է հարավից։ Սա կարող է վկայել հօգուտ Փորսուկի ավերողների հարավային ելակետի (O. Pelon. The Site of Porsuk and the Beginning of the Iron Age in Southern Cappadocia.—In: AJA 3, p. 159):

30 K. Bittel. Die archäologische Situation in Kleinasien um 1200 v. Chr. und während der nachfolgenden vier Jahrhunderte.—In: Griechenland, die Ägais und die Levante während der „Dark Ages" vom 12. bis zum 9. Jh. v. Chr. (ed. S. Deger-Jalkotzy), Wien, 1983, S. 31.

31 K. Bittel. Hattusha. New York, 1970, p. 137ff.

32 Տե՛ս կենտրոնական Փոքր Ասիայի ավերված քաղաքների տեղադրությունը ըստ Կ. Բիտտելի քարտեզի (K. Bittel. Op. cit., S. 31)։ Դրանցից միայն մեկն է գտնվում Խաթթուսասից արևմուտք՝ ժամանակակից Կարաօղլանի մոտ։

33 Հաշվի առնելով խեթերի հյուսիսային, հյուսիս-արևելյան հարևան կասկական ցեղերի կողմից Խաթթուսասի և շրջակա քաղաքների վրա մշտապես կատարվող ավերիչ արշավանքների մասին բազմաթիվ հիշատակությունները խեթական աղբյուրներում, մասնագետների մեծ մասը հենց նրանց է վերագրում կենտրոնական Փոքր Ասիայի ավերածությունները (E. von Schuler. Die Kaskaer. Berlin, 1965, S. 65; И. М. Дьяконов. ПАН, с. 117 сл.; G. A. Lehmann. „Ugarit-Forschungen" 2. 1970, S. 47f.; R. D. Barnett. CAH II/2, 1975, p. 370; J. Mellaart. The Archaeology of Ancient Turkey, p. 72; R. Beal. The Hittites After the Empire's Fall.—Biblical Illustrator, 1983, p. 76f.; Ա. Քոսյան. ՊԲՀ, 1991, № 1, էջ 76 և այլն։

հենց Խաթթիի բնակչությունը[34]։ Փոքր Ասիայում նոր էթնիկական խմբերի այսպիսի աշխարհագրությունը զարմանալիորեն համապատասխանում է պատմական Մեծ Փռյուգիայի քաղաքական և մշակութային սահմաններին, մի փաստ, որ արդեն նկատվել է[35]։ Փռյուգական զորշ խեցեղենը քիչ թե շատ կանոնավոր կերպով վկայված է Հալիսի արևմտյան հոսանքից արևմուտք, բայց ոչ արևելք կամ հարավ։ Զորշ խեցեղենի այսպիսի աշխարհագրությունը չի հակասում հիերոգլիֆային լուվիական և մ. թ. ա. VIII դարի ասորեստանյան աղբյուրներին։ Ըստ դրանց, մ. թ. ա. VIII դարի վերջին քառորդում Միտա-Միգասի փռյուգական պետության հզորության շրջանում վերջինիս անմիջական սահմանները հարավ-արևելքում հասնում էին մինչև ժամանակակից Թուզ լճի հյուսիսային մերձափնյա շրջանը, իսկ արևելքում առկա է մի մշակույթ, որը, չնայած պայմանականորեն կոչվում է «հին փռյուգական»[36], սակայն իրականում ոչ մի առնչություն չունի ո՛չ Սանգարիոսի հովտի, ո՛չ էլ Հյուսիսային Բալկանների հետ[37]։ Նշված շրջաններում Փռյուգիան սահմանակցում էր Թաբալի լուվիական պետություններին։

Այսպիսով, բալկանյան ժողովուրդների միգրացիան Փոքր Ասիայում ակնհայտորեն սահմանափակ բնույթ է կրել, տարածվելով միայն մինչև Խեթական տերության կենտրոնական շրջանների արևմտյան մատույցները։ Այստեղ, Խաթթիի անկման շրջանի ցնցումներից հետո շարունակվել է տեղական մշակույթի կենսագործունեությունը, իհարկե, որոշ փոփոխություններով։

3. ԱՐՆՎԵԼՅԱՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՆ ԵՎ ՎԵՐԻՆ ԵՓՐԱՏԻ ԱՎԱԶԱՆԸ

Միջին ասորեստանյան պետության՝ դեպի Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան և արևմտյան շրջաններն ուղղված արշավանքների պատմությունը բավական լավ է ուսումնասիրված[38]։ Վերին Տիգրիսի և Վերին Եփրատի ավազանների շրջանում Սալմանասար I-ի և Թուկուլթի-Նինուրտա I-ի ձեռնարկած մի շարք արշավանքների ընթացքում այստեղի պետական կազմավորումները աստիճանաբար հայտնվեցին Ասորեստանի քաղաքական ազդեցության ոլորտում։ Ասորեստանի առաջխաղացումը հասավ իր ծավալման բարձրակետին հատկապես մ. թ. ա. 1234/3 թ., խեթերի դեմ մղած Նիխրիյաի ճակատամարտի ժամանակաշրջանում, որը թույլ տվեց ասորեսանյան զորքին 28 800 մարդ գերեվարել Եփրատի արևմտյան առափնյա շրջ-

---

34 Խաթթուսասի բնակչության ապստամբության հնարավորության մասին տե՛ս Ա. Վ. Քոսյան. Կրկին էթնիկական տեղաշարժերի մասին։—ՊԲՀ, 1994, № 1—2, էջ 247։

35 G. D. Summers. An Aerial Survey of Cevre Kale, Yaraşlı.—AnSt 42, 1992, p. 195; idem. Grey Ware and the Eastern Limits of Phrygia.—In: AIA 3, p. 241ff.:

36 Այս հնացած տերմինը պատկանում է Ն. Ակուրգալին (E. Akurgal. Phrygische Kunst. Ankara 1955):

37 Հալիսի հոսանքով պարփակված տարածքում և արևելքում՝ մինչև Մալաթիա, մ. թ. ա. I-ին հավ. առաջին կեսին վկայված է այսպես կոչված «Ալիշար 4» տիպի խեցեղեն, որը միանգամայն տարբեր է փռյուգական խեցեղենից (G. D. Summers.—AIA 3, p. 245). Կենտրոնական Փոքր Ասիայի և Սանգարիոսի հովտի մշակույթների միջև եղած ակնառու տարբերություն պիտի դիտել նաև առաջինի տարածքից հայտնի բնակավայրերը իրենց հատուկ ամրաշինական տեխնիկայով (Ալիշար, Զալափվերդի, Հավուդքյոյ, Կերկենես դաղ, Կուլուլու)։ Այս մշակույթը ակնհայտորեն մտնում է լուվիական մշակութային արեալի մեջ (G. D. Summers. Op. cit., p. 246). մի փաստ, որ ամրապնդվում է նշված վայրերում հիերոգլիֆային լուվիական արձանագրությունների գոյությամբ։

38 J. M. Munn-Rankin. Assyrian Military Power, 1300—1200 B. C..—In: CAH 11/2, 1975, p. 285f; Н. В. Арутюнян. Бианили. Ереван, 1970, сс. 12 сл.; D. J. Wiseman. Assyria and Babylonia, c. 1200 B. C.—In: CAH 11/2, 1975, p. 454ff. և այլն։

ցանկերից[39]։ Գրեթե նույն ժամանակներում խեթերի ազդեցությունը վերացել էր նաև ասորեստանյան առաջխաղացումից չտուժած Հայասա-Ազզիի նկատմամբ[40]։

Թուկուլթի-Նինուրտայից մինչև մ. թ. ա. XII դարի վերջերը ասորեստանյան աղբյուրները ոչ մի տեղեկություն չեն հաղորդում վերինեփրատյան երկրների մասին, միակ բացառությամբ, այն է՝ Թիգլաթպալասար I-ի կողմից մ. թ. ա. 1165 թ. սահմաններում Ալզիում և Պուրուկուզզիում հայտնված մուշկերի և այլ ցեղերի մասին հիշատակությունը[41]։

Եթե մինչև վերջերս վերը նշված ժամանակահատվածում այս տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները մեկնաբանվում էին միայն ասորեստանյան աղբյուրների հիման վրա, և թվում էր, թե խնդրի լուծումը լուրջ հեռանկար չի խոստանում, ապա այժմ արդեն մեր տրամադրության տակ կա միանգամայն նոր սկզբնաղբյուր, որի ընձեռած հնարավորությունները դժվար է գերագնահատել։

Վերին Եփրատի ավազանում, հատկապես այսօրվա Մալաթիայի և Էլյազըղի շրջաններում 1950—70-ական թվականներին ընթացած հնագիտական աշխատանքների ժամանակ[42] հայտնաբերված վիթխարի քանակությամբ խեցեղենը թույլ է տալիս կարևոր եզրակացությունների հանգել սույն հոդվածում բարձրացված խնդրի առնչությամբ։

Այսպես, նշված տարածաշրջանի մշակութային զարգացման պատկերը հետևյալն է։ Ուշբրոնզեդարյան (մ. թ. ա. XV—XIII դդ.) խեցեղենը կրում է կենտրոնական Փոքր Ասիայի մշակութային ուժեղ ազդեցություն, որը, բնականաբար, կապված էր խեթական տերության քաղաքական ազդեցության հետ[43]։ Սակայն ուշ բրոնզից վաղ երկաթ անցման շրջանում (մ. թ. ա. 12-րդ դար), հատկապես Էլյազըղի շրջանի նյութը վկայում է այստեղ տեղի ունեցած մշակութային-դեմոգրաֆիական խոշոր տեղաշարժերի օգտին, մի բան, որ, թվում է, անհնար է առանձնացնել Թիգլաթպալասար I-ի տեքստերում պահպանված տեղեկություններից։

---

[39] ARI I, §§ 773, 783.

[40] Այսպիսի տպավորություն կարելի է ստանալ Թուդխալիյաս IV-ի՝ իր սահմանային մարզերի կառավարիչներին տրված հրահանգից. «Տերերդ, ովքեր առաջին հերթին (՞) կառավարում էք Ազզին, Կասկային (և) Լուկկային նայող սահմանային կետերը» (KUB XXVI 12 II 12–15):

[41] ARI II, § 12ff.

[42] C. A. Burney. Eastern Anatolia in the Chalcolithic and Early Bronze Age.—AnSt 8, 1958, pp. 157–209; idem. Aspects of Excavations in the Altınova.—AnSt 30, 1980, pp. 157—167; A. Palmieri. Insediamento del Bronzo Antico a Gelinciktepe (Malatya).—Origini 1, 1967, pp. 117–193; H. Hauptmann. Norsuntepe. Historische Geographie und Ergebnisse der Grabungen 1968/69.—IM 19—20, 1969–1970, S. 21—78; U. Esin. Tepecik Kazisi, 1968. Keban Projesi 1969, Çalışmaları, Ankara, 1970, p. 147–158; P. E. Pecorella. Malatya III. Roma, 1975; M. van Loon (ed.). Korucutepe II, Amsterdam, 1978; idem. Korucutepe III. Amsterdam, 1980; J. Yakar and A. Gürsan-Salzmann. Archaeological Survey in the Malatya and Sivas Provinces.– Tel-Aviv 6, 1979, pp. 34–53; G. Korbel. Die spätbronzezeitliche Keramik von Norsuntepe. Hannover, 1985.

[43] V. Sevin. The Early Iron Age in the Elazig Region and the Problem of the Mushkians.—AnSt 41, 1991, p. 87f; J. Yakar.—Tel-Aviv 20, 1993, p. 18.

Նշված փոփոխությունները հանգում են հետևյալին։ Պարզորոշ նկատվում է բնակավայրերի և բնակչության քանակի կտրուկ անկում[44], ընդ որում որոշ բնակավայրեր (օրինակ, Կորուչութեփեն և Նորշունթեփեն) կրում են զգալի ավերածություններ հետքեր[45]։ Ամենուրեք ուշ բրոնզի վերջին շերտի և վաղ երկաթի առաջին շերտի միջև որևէ տեսանելի ընդմիջում չկա, այսինքն, նոր բնակչությունը պիտի անմիջապես կամ կարճ ժամանակահատվածում հաստատվեր լրիվ կամ մասամբ լքված բնակավայրերում[46]։

Վաղ երկաթեդարյան բնակչության մշակույթը, ինչպես երևում է խեցեղենից, պարիսպների շարվածքից և բնակելի տների ճարտարապետությունից, միանդամայն տարբեր է խեթական ժամանակաշրջանի շերտերից։ Չնայած դրան, ուշբրոնզեդարյան խեցեղենը չի ընդհատվում և դեռ բավական երկար ժամանակ գոյատևում է նոր խեցեղենի հետ կողք-կողքի[47]։ Իսկ ինչ վերաբերում է նոր, երկաթեդարյան բնակչությանը, ապա նախորդ շրջանի համեմատ էլյազղի տարածքի բնակավայրերի քանակը ցույց է տալիս գրեթե 50 տոկոսի աճ[48]։

Վերոհիշյալ դիտարկումները, անկասկած, վկայում են էլյազղի շրջանում խեթական տերության տրոհման պահին կամ քիչ ավելի ուշ նախկին բնակչության մի մասի հեռացման և նոր, մեծաքանակ բնակչության ներհոսքի օգտին։ Բնականաբար, անհնար է այս ժողովրդագրական փոփոխությունը առանձնացնել Թիգլաթպալասար I-ի հիշատակած մուշկերի և մյուս ցեղերի առաջխաղացման փաստից։ Հատկապես այն պատճառով, որ նշված տարածքում մ. թ. ա. XII դարից հետո մի քանի դար շարունակ պարզորոշ նկատվում է մշակութային շարունակականություն, այսինքն, ժողովրդագրական այլ փոփոխություններ այլևս վկայված չեն։

Մնում է միայն ավելացնել, որ էլյազղի շրջանում մ. թ. ա. XII դարում հայտնված և մուշկերի հետ կապվող նոր խեցեղենի աղբյուրը մասնագետները հակված են որոնելու հենց Հայկական լեռնաշխարհում, բայց ոչ Փոքր Ասիայում, առավել ևս Բալկաններում (տե՛ս ստորև)։

Այժմ փորձենք մեկնաբանել վերոհիշյալ հնագիտական տվյալները և դրանք համադրել մուշկերի խնդրի շուրջ առ այսօր եղած պատկերացումների հետ։

Մուշկերի էթնիկական պատկանելության և մինչտեղաշարժային տեղադրության խնդիրները գրեթե բացառապես գիտվել են խեթական տերության գոյության ավարտական փուլում տեղի ունեցած էթնիկական խոշոր տեղաշարժերի ենթատեքստում։ Մասնագետների մեծ մասը, հիմք ընդունելով վերինեփրատյան մուշկերի անվան նույնությունը շատ ավելի ուշ շրջանում ասորեստանյան աղբյուրներում հիշատակվող Մեծ Փոյուգիայի Մուշկու անվանաձևի հետ, առաջիններին անվերապահորեն համարել է մինչև մ. թ. ա. XII դարը Հյուսիսային Բալկաններում բնակվող հնդեվրոպական ծագման էթ-

---

[44] V. Sevin.—AnSt 41, 1991, p. 87.

[45] J. Yakar.—Tel-Aviv 20, 1993, p. 195.

[46] Նույն տեղում։

[47] Նույն տեղում։

[48] V. Sevin. Op. cit., p. 87f.

նիկական խումբ[49]։ Մյուսները, հենվելով մուշկ և կասկ ցեղանունների, ինչպես նաև մուշկերի անվան և Հերոդոտոսյան մոսխերի անունների նմանության վրա, սրանց համարել են Փոքր Ասիայի հյուսիս-արևելյան շրջանների բնակիչներ[50]։ Այս երկրորդ տեսակետի հետևորդներից ոմանք, գլխավորապես վրաց պատմագրության ներկայացուցիչները[51], փորձում են մուշկերին բարթվելական ծագում վերագրել։

Մուշկ ցեղանվան շուրջը եղած լեզվաբանական պրպտումները հազիվ թե լուրջ հեռանկար խոստանան թեկուզև այն պատճառով, որ ցեղանունները միշտ չէ որ ստուգաբանվում են դրանց կրողների լեզվով։ Բացի այդ, 1) ոչ ոի հիմք չկա ենթադրելու, որ Հերոդոտոսի մոսխերը իրոք բարթվելալեզու են եղել, 2) հաղիվ թե արևելյան (վերինեփրատյան) և արևմտյան (փոյուզական) մուշկերի դրաղեցրած տարածքներում կարող էին դարեր շարունակ ապրել բարթվելալեզու էթնիկական խմբեր և հետագայում հիմնովին ձուլվել այլ ժողովուրդների մեջ, առանց տեսանելի հետք թողնելու։

Վերին Եփրատի շրջանում նոր խեցեղենի (համապատասխանաբար, նաև բնակչության) ելակետի խնդրի լուծումը առայժմ բավական լուրջ բարդությունների հետ է կապված։ Բանն այն է, որ, չնայած նման խեցեղեն կամ, համենայնդեպս, դրա որոշ տիպեր, դրանցված են հարավ-արևելյան Վրաստանում, Կարմիր բլուրում, Գեոյ Թեփե Ա շերտում (հյուսիս-արևմտյան Իրան), Գյուզելովայում ու Պուլուրում (Էրզրումի շրջան), Դիլկայա Հյոյուքում (Վանա լճի հարավ-արևելյան ափին) և Տիլլե Հյոյուքում (Ադըյամանի մոտ)[52], սակայն դրանց դդալի մասի ճշգրիտ թվագրման բացակայությունը թույլ չի տալիս որոշելու մուշկերի և նրանց ազդակից ցեղերի տեղաշարժերի ո՞չ երթուղին, ո՞չ էլ ժամանակը։ Ասվածի լավագույն օրինակը Տիլլե Հյոյուքն է, որի նյութը կարծես թվագրվում է մ. թ. ա. IX—VIII դդ.[53], և դա այն դեպքում, երբ, ըստ Թիգլաթպալասար I-ի, մուշկերն այստեղ հայտնվել են դեռևս մ. թ. ա. XII դարի վերջին քառորդում (Կադմուխի նոկիրը)։

Հաշվի առնելով «մուշկական» խեցեղենի ոչ հստակ թվագրումը դրա աշխարհագրական լայն տարածման պայմաններում, թերևս, կարելի է միայն վստահորեն հայտարարել, որ 1) «մուշկական» խեցեղենը Հայկական լեռնաշխարհի ծնունդ է, այլ ոչ օտար, ներմուծովի երևույթ, 2) այդ խեցեղենի սաղծողները ալիսի դդալի թիվ կազմեին, 3) ամենայն հավանականությամբ, դրանք մի կոնկրետ ցեղ չեն եղել, այլ Հայկական լեռնաշխարհի նկատելի մասը ընդգրկող որոշակի էթնոմշակութային զանգվածի տարբեր հատվածները, 4) մուշկերի տեղաշարժերը Հայկական լեռնաշխարհի արևմուտքում և

---

49 Տե՛ս ծան. 1։

50 Տե՛ս ծան. 2։

51 Г. А. Меликишвили. Наири Урарту, с. 106; նույնի Die alten georgischen Staaten und ihre sozialökonomische Ordnung.—Georgica 13/14, 1990/91, S. 7; O. Lortkipanidse. Wann beginnt die Geschichte der georgischen Kultur?—Georgica 16, 1993, S. 6

52 V. Sevin.—AnSt 41, 1991, p. 87f.: Նման խեցեղեն վկայված է նաև Վանի միջնարերդի տարածքի մինչուրարտական շերտում (V. Sevin. The Excavations at the Van Castle Mound.—In: AIA 3, p. 221f.).

53 S. B. Blaylock, D. H. French and G. D. Summers The Adıyaman Survey: an Interim Report.—AnSt 40, 1990, p. 110ff.:

հարավ-արևմուտքում, չնայած ժամանակագրորեն համընկնում են Բալկաններից դեպի Փոքր Ասիա ընթացած էթնիկական տեղաշարժերին, սակայն դրանք միմյանց հետ չեն փոխառնչվում։

Այնուամենայնիվ, որքան էլ որ Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում հայտնաբերված «մուշկական» խեցեղենի ոչ հստակ թվագրումը արգելակի մուշկերի ելակետի խնդրի լուծմանը, թվում է, որ լուրջ կռվաններ կան նրանց նախնական բնակության վայրի որոշման հարցում.

1) Մուշկերի և կասկերի համատեղ հիշատակությունը միևնույն տարածքում՝ Թիգլաթպալասար I-ի մոտ։

2) Նշված ցեղերի բնորոշումը որպես «խաթթի երկրի անհնազանդ ժողովուրդներ»[54]։ Սա միանշանակ վկայում է հօգուտ այն բանի, որ կասկերի հետ Վերին Եփրատի ավազանում հիշատակվող մուշկերն ու ուբումունները նախապես պիտի բնակվեին խեթական տերության քաղաքական ազդեցության ոլորտում։ Իսկ այդպիսի տարածքներ, որքան հայտնի է խեթական աղբյուրներից, մ. թ. ա. XIV—XIII դդ. արևելքում հանդիսանում էին Հայասա-Ազզին և Խուվան (հայկ. Ծոփք)։ Իսկ քանի որ Խուվայի տարածքը հենց այսօրվա Էլյազղն է, ապա մուշկերին պիտի փնտրել կա՛մ Հայասա-Ազզիում, կա՛մ նրա մերձավոր հարևանությամբ։ Այս առումով չի կարելի անտեսել այն, որ Հայասայի տարածքում պիտի գտնվեին «մուշկական» խեցեղենի կենտրոններից երկուսը՝ Գյուզելովան և Պուլուրը (տե՛ս վերը)։

Մուշկերի խնդրի շուրջ ի հայտ եկած նորադույն տվյալների պատմաղիտական իմաստավորումը հանգեցնում է հետևյալ տրամաբանական եզրակացությանը. մ. թ. ա. XIII դարի վերջերին—XII դարում Բալկաններից դեպի Հայկական լեռնաշխարհ ընթացած պրոտոհայկական ցեղերի տեղաշարժի մասին ավանդական կարծիքը որևէ հիմք չունի։ Եթե նույնիսկ ենթադրենք, որ հայերենի կրող ցեղերը ինչ-որ ժամանակ իրոք Հայկական լեռնաշխարհ են հասել Եվրոպայի ինչ-որ մասում տեղադրվող հնդեվրոպական նախահայրենիքից (Բալկաններ, հյուսիսմերձևսծովյան տափաստաններ և այլն), ապա այդ տեղաշարժը պիտի տեղի ունենար անհամեմատ ավելի վաղ ժամանակներում, քան մ. թ. ա. XII դարը[55]։

---

54 ARI II, § 93:

55 Հարկ է նշել, որ վերջին շրջանում Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում մ. թ. ա. IV—III հազարամյակներում գոյություն ունեցած Կուր-Արաքսյան (արևմտյան գրականության մեջ՝ «Վաղ անդրկովկասյան») կամ նրա մի մասի էթնիկական բաղադրիչի հարցում նկատվում է տեղաշարժ դեպի դրա հնդեվրոպական բնույթը (տե՛ս մասնավորապես, Sh. M. M. Winn. Burial Evidence and the Kurgan Culture in Eastern Anatolia c. 3000 B. C.: an Interpretation.—JIES 9, 1981, 1/2, p. 113ff.; I. Yakar. The Indo-Europeans and their Impact on Anatolian Cultural Development.—JIES 9; 1981, 1/2, p. 101ff.; Idem. Beyond the Eastern Borders of the Hittite Empire: an Archaeological Assessment.—In: Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honor of Sedat Alp (eds. H. Otten et al.), Ankara, 1992, p 507ff.; Ch. Burney. Arslantepe as a Gateway to the Highlands: a Note on Periods VIA—VID.—In: Between the Rivers and Over the Mountains (eds. M. Frangipane et al.). Roma, 1993, p. 313ff.).

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ՊՊՀ — Պատմա բանասիրական հանդես

ВДИ — Вестник древней истории

ПАН — И. М. Дьяконов, Предистория армянского народа. Ереван, 1968.

AA — Artibus Asiae

AIA 3 — Anatolian Iron Ages 3 (eds. A. Çilingiroglu and D. H. French), Ankara, 1994

AJA — American Journal of Archaeology

AnSt — Anatolian Studies

ARI — A. K. Grayson, Assyrian Royal Inscriptions, vols. I—II, Wiesbaden, 1972—1976

BSA — Annual of the British School of Archaeology at Athens

CAH — Cambridge Ancient History

Crisis — The Crisis Years: The 12th Century B. C. (eds. W. A. Ward and M. Sh. Joukowsky), Dubuque, 1992

IM — Istanbuler Mitteilungen

JHS — Journal of Hellenic Studies

JIES — Journal of Indo European Studies

JMA — Journal of Mediterranean Archaeology

KUB — Keilschrifturkunden aus Boghazkoi

The Trojan War — The Trojan War: Its Historicity and Context (eds. L. Foxhall and I. K. Davies), Bristol, 1984

I

ПРОБЛЕМА «ВОСТОЧНЫХ» И «ЗАПАДНЫХ» МУШКОВ

А. В. КОСЯН

Резюме

На основании новейших эпиграфических и археологических данных в статье пересматриваются существующие в научной литературе различные теории относительно проблемы мушков, зафиксированных в ассирийских, урартских, иероглифических луийских и более поздних источниках. Анализ письменных источников и археологического материала позволяет предложить следующие выводы по проблеме мушков: 1. «Восточные мушки», известные в районе Верхнего Евфрата по источникам XII в. до н. э., не имеют отношения к носителям миграционной волны из северных Балкан в Малую Азию, которая проходила в конце XIII—XII в. до н. э. Последние (т. н. фрако-фригийцы) археологически зафиксированы лишь в западно-центральной Малой Азии, то есть примерно там, где в более позднюю эпоху (VIII в. до н. э.) существовало Фригийское царство. 2. Большое количество новой, т. н. «мушкой» керамики, известной в районе верхнего течения Евфрата, в Эрзерумском и Ванском районах, а также на территории современной Армении и Грузии, свидетельствует об автохтонном происхождении «восточных мушков». 3. Продвижение «восточных мушков» в сторону верхнеевфратских стран Алзи, Пурукуззи и далее в Кадмухи следует рассматривать на фоне кризиса древнеближневосточных обществ XII в. до н. э. По всей видимости, это была локальная миграция из северо-западной и западной части Армянского нагорья на юг, до Северной Месопотамии. Отправным пунктом миграции мушков предлагается территория страны Хайаса-Аззи, известной по хеттским текстам XV—XIII вв. до н. э.

THE PROBLEM OF „EASTERN" AND „WESTERN" MUSHKIANS

A. V. KOSTIAN

Summary

By virtue of recent epigraphic and archaeological discoveries, the author revises the current theories regarding the Mushki, the tribes attested to in the Assyrian, Urartian, Hieroglyphic Luwian and in later written sources. The analysis of written sources coupled with the archaeological data allow the author to suggest the following conclusions: 1) The „Eastern" Mushki, attested to in the Upper Euphrates area in the XII B. C. are not related to the migrants who had come from the Northern Balkans into the Asia Minor during the XIII–XII B. C. Archaeological findings verify the latter's presence only in west-central Asia Minor, i. e. in the area where much later (in the VIII B. C.) we find the Phrygian kingdom. 2) The great quantities of new, the so-called „Mushkian" pottery from the Upper Euphrates area, namely from the districts of Erzerum and Van, as well as from modern Armenia and Georgia confirm the indigenous origin of „Eastern" Mushki. 3) The advance of „Eastern" Mushki towards the Upper Euphrates countries of Alzi, Purukuzzi and further into Kadmuhi has to be considered on the background of the XII B. C. Near-Eastern crisis. Evidently, this was a local migration from north-western and western parts of the Armenian Highland towards south, up to Northern Mesopotamia. The author proposes that the starting point of the Mushki migration was the territory of Hayasa-Azzi, attested to in the XV—XIII B. C. Hittite texts.